

Արսոնաժե
Եւ Պաս. Տնօրէն
ԲԻԹԸՐ
ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Խմբագիր՝
ՋԱԻԷՆ ՅԱԲԷԹԵԱՆ

Հասցէ՝
Greek P. O. Box 54

Բաժանորդագր.

Իզմիր
Տարեկ. Վեցամս.
100 60 դր.

Գաւառ.
Կ. Պոլիս
120 75 »

Հասք 5 Հրու

Հասք 5 Հրու

Directeur
et Ger. Resp.
PETER
COUYOUMDJIAN
Redacteur
ZAVEN HAPETIAN

Adressé
Greek P. O. Box 54

Բաժանորդագր.

Արսասանմանի
Եւրոպայ
Տարեկ. Վեցամս.
10 6 ֆր.

Ամերիկայ
1 օշար 60 սենթ



ՊԱՏՐԱՍ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ ՀԱՅ ՊՈՅ-ՍԿԱՈՒՏԵՐՈՒ ԻԶՄԻՐ

BADRASD

Organe des Boy-Scouts Arméniens
de SMYRNE

ΜΗΔΡΑΣΤ

ΟΡΓΑΝΟΝ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΠΡΟΣΚΟΠΩΝ
ΣΜΥΡΝΗΣ

Բաժանորդական խնդիրներու համար ղիտել՝
ՆՈՒՊԱՐ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆԻ Librairie «Ararat»
17, Rue Imam, Rechidié - Smyrne

«ՊԱՏՐԱՍ»-ի Խմբագրութիւնը Ս. Ջափիկի առ-
թիւ անկեղծ շնորհաւորութիւնները կը յայտ-
նէ իր ընթերցողներուն, բոլորակիցներուն,
բոլոր սկաուտներուն եւ մարզիկներուն:



Եգիպտոսի Հայ Սկաուտները բանակումի ժամանակ՝
անձեւ հեռագրի գործիքին զուլսը.

Les Boy-Scouts Arméniens d'Egypte se servent du
télégraphie sans fil au camp.



Տիպար Հայ Սկաուտ մը իր պաշտօնական համազգեստով.
La tenue officielle de l'Eclaireur Arménien

ՋԱՏԻԿ

Ջատիկ է. սկաուտիզմի նոր եղա-
նակին սեմին վրայ՝ կուգանք ողջու-
նել տնոր քաղաւաքը, ապագայ ազատ
գործունէութեան մը յոյսով տողոր-
ուած:

Այս գալար մարգերու և նորածիլ


ճաղիկներու մէջ տօնելով կարմիր
Ջատիկը, մենք սկաուտներս, կըզ-
գանք թէ այս աշխարհը ուր կ'ապ-
րինք երջանկութիւն մ'է լոկ անոնց
համար որ կը շնչեն դաշտերու մա-
քուր օդը ու կը վայելին ազատ բը-
նութեան առաջին ժպիտները:

Կը յիշենք հին Ջատիկները ուր մեր

առաջին ընկերականութիւնը հաստա-
տեցինք իրար մէջ ու այս բացօդայ
վեհ լոռութեան մէջ կը լսենք խմբա-
պետին թրթռուն ձայնը որ կը դրօշ-
մուի մեր սրտերուն մէջ և իտէալը՝
մեր հոգիներուն մէջ... Ջատիկ է:

Սկաուտ

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ



(Բաղրոյ)

Բանակը ազնուագոյն բարքերու
բոյն մը պէտք է ըլլայ.

Պէյտըն Ռաուել

II

Խմբակներու կազմակերպութիւնը

Խմբակ մը որ բնագնահատական կազմութեամբ կ'ըլլայ առաջնորդէ մը (leader) և 6-10 սկաուտներէ, պէտք է միայն գործօն անդամներ պարունակէ. հոն մաս պէտք չեն կազմել այն կէսըսկաուտները որոնք միայն խաղերով կը հետաքրքրուին և կամ հազիւ քանի մը դասախօսութեանց ներկայ կը գրտնուին առանց խմբակին յառաջդիմութեան գործով զբաղելու:

Արդ, բոլոր սկաուտները խմբակին կենսական տարրերը պիտի ըլլան, որով ամիսը անգամ մը պարտաւոր են հաւաքուիլ իրենց սկաուտները խորհրդակցելու համար խմբակին ներքին խնդիրներուն շուրջ և կամ խումբին հանդէպ խմբակին պարտականութեանց ու յառաջդիմութեան միջոցներուն շուրջ:

Նորպէս խմբակներու ա'լ աւելի կեանք պարգեւելու համար խմբակներ պէտք է խմբակներու միջև կազմակերպէ վազքի, չուան քաշի և ըն. մրցումներ ու պէսպիսի խաղեր, որոնք պատճառ կը հանդիսանան խմբակներու մէջ խանգը միշտ վառ պահելու:

Այս առթիւ խմբակները պարտաւոր են խմբակի առաջնորդին լայն իրաւութիւն տալ իր խմբակը վարելու գործին մէջ. իրաւամբ, առաջնորդ մը պատասխանատուութիւնը զինքը կը մղէ զէպի բարի գործը ու միշտ կը փախչի գէշէն, գիտնալով թէ երբեք գէշութիւն չի կրնար ընել եթէ բարեք ընելու կամք ունի իր մէջ:

Արդ պէտք ենք ընդունիլ թէ՛
1. Աւելնալայն իրաւատուութիւն պէտք է տրուի առաջնորդին ու անպէտ աստիճանաւորներ չ'ընդունիլ խումբի մը մէջ:

2. Այսպէս, առաջնորդը լայն իրաւատուութիւն ունենալով իր սկաուտներուն վրայ, պատասխանատուութիւն մ'ալ ունի խմբակիտին հանդէպ, ինչ որ խումբին յառաջդիմութեան կը սատարէ:

3. Խմբակներու իրենց միջև ունեցած կատարեալ անկախութիւնը բարի նախանձի գաղափարը պիտի գրգռէ, որով սկաուտիվորն պիտի օգնէ իր նպատակին հասնելու:

== Վերջ ==

ՎԱԳՐ

Ըսինք թէ երիտասարդութիւնը ամենէն բեղուն շրջանն է մարդկային կեանքին, կարելի է ըսել որ անով կը յատկանշուի ամբողջ անհատականութիւնը, այսինքն կարելի է ունենալ մարդուն կեանքին պատկերը՝ խոր զննութեան մը ենթարկելով 18-30 տարեկան երիտասարդին կենցանը:

Կարծես թէ՛ որոշած և սահման մը դրած եղանք երիտասարդութեան՝ 20-30 տարեքը յիշելով, ըսել կ'ուզենք միայն որ այս ժամանակամիջոցին՝ միտքը, հոգին և մարմինը ընդունակ են խանգավառութեն նպատակ մը հետապնդելու, արժեքներու իրենց ճիգը, ապագայ իրենց կեանքը գեղեցկօրէն ապրելու, արգիւնաւորելու համար:

Եթէ երբէք պատանի-երիտասարդ ուղիղով չենք սիրած ու փայփայած գործ մը, իտէալ հանգրուանի մը մօտենալու ոգորումովը չենք տառապած, եթէ մեր միտքը սեւեռուն չէ եղած՝ այլ մտայնութիւն մը ունենելու... տրտման վիճակով մտորած, ապա ուրիմն անկէ վերջ նոր ոչինչ կ'սրելի է յղանակ ու գործադրել, որովհետեւ հիմը կը պակսի, ծառը արմատի մագձուկներէն մեծ բան կ'որսնցուցած և առիշտ անբաւական է այլեւս զէպի վեր, զէպի լայն ու արեւոտ հորիզոնը բարձրանալ կարենալու համար:

Աւելնալայն երիտասարդ, տիպար մը պէտք է ունենայ իր մտքին, նայած իր խառնուածքին, իր յատկութիւններուն ու ջանալ իրագործել, գիտնալ զայն նոյնիսկ, քանի որ աւելի կարելիութիւն ունի քան իր ընտրածը որ անցուցած է ժամանակը, սպառած է՝ իր հոգիին գանձերը, ու մարմինն ալ իր սպառումին աւելի մօտ է: Այսպէս՝ նիւթական հարստութիւն գիտնալու ցանկութեամբ վառուողները գործը անդադար թող հետապնդեն, ու իրենց երազներն ալ... որ մը ոսկիէ պիտի հիւսուին, կը վստահեցնեմ զիրենք: Աւելնալայն պարէզի մէջ այդպէս է, ջանքը եթէ անպակաս ըլլայ արդիւնքը ապահով կ'աւելի է նկատուի:

Սեր երիտասարդութիւնը կրնայ ըլլալ աւելի քան ինչ որ է, ունի յարմար պայմաններ՝ յառաջանալու բարոյապէս, մտաւորապէս և նիւթապէս, սակայն մնացած է տարիներու ընթացքին այն ինչ որ է, ետ գացած քան թէ առաջ: Ի՞նչ է ասոր պատճառը, կը տեսնենք յաջորդիւ:

Պ. Պ. Տ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԲՆԵՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՅՈՒՆԻԱԿԱՆ ԵՐԶԱՆԻ
ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ

ՆՈՐԸՆԾԱՅ

- 1—Սկաուտի երգումն ու օրէնքը, անոնց ճշգրիտ իմաստին բացատրութիւնը, սկաուտի շշանն ու բարեքը:
- 2—Գիտնալ Հայկական դրօշին գոյներն ու անոնց նշանակութիւնը և յարգանքի ձևակերպութիւնները գործ պէտք է կատարել:
- 3—Կապիլ հետեւալ հանգոյցները.
Ա. Քառակուսի կապ. Բ. Սահունի կապ. Գ. Գեղանի կապ. Դ. Ամփոփ կապ. Ե. Կետ-կապ. Զ. Չկնդրուա-կապ է. Աղիդակապ:

ԵՐԿՐՈՐԴԻ ԿԱՐԳ

- 1—Առնուազն երկու ամիս իրր նորընծայ՝ խումբի մը մէջ ծառայած ըլլալ:
- 2—Տարրական հատութիւն՝ նախնական դարձանի և վիրակապերու. այսինքն գիտնալ դարձանը տա-նել նուազումի, ոսկրափեկումի,

ոսկրախախտումի, մորթի պատուածքի, այրումածքի և խաշ-ւածքի: Յոյց տալ վիրաւոր մը կը-րելու եղանակներն ու գործադրու-թիւնը եռանկյուն և երակասեղմ վիրակապերու:

- 3—Գիտնալ տարրական դրօշխօսու-թիւն:
- 4—Տասներկու վայրկեանէն 1 մղոն ճամբայ կտրել սկաուտի գնաց-քով (50 քայլ վազք, 5 քայլ հա-տարակ քալումով փոխ իփոխ):
- 5—Հետք ճանչնալ և անոր հետեւիլ:
- 6—Բաց օդին մէջ կրակ չիռնել և վառել, երկու լուցիկէն աւելի չը վատնելու պայմանաւ:
- 7—Սկաուտական ամանի մէջ կարե-նալ հիփիլ 50 տրամ միս և 2 քիտ-նախնձոր:
- 8—100 դահեկան իրր խնայուած զը-րամ՝ ի պահ ունենալ:
- 9—Կողմնացոյցի մը 16 գլխաւոր բա-ժանումները ճանչնալ:

Ունեցողներէն կը կամգործածուած Ռալիի (Raleigh) հեծերանիւ մը: Ունեցողներէն կը խնդրուի դիմել Խմբագրութեան:

ՍՎԱՌԻՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՇԱՂԺՈՒՄ

Ընդհ. Պետ Պր. Մ. Եանդգեան կը շարունակէ իր աշխատանքը Հայ Պոյ- Սկսուածներու դասընթացքին պատ- րաստութեան համար: Զեռագիրները գրիթէ տարտած ըլլալով միայն Ա. կարգի դասախօսութեանց մէկ մասը մնայած է զորս յուսով ենք թէ մինչև մէկ ամիս չը լրանայ ու անմիջապէս հրատարակութեան յանձնուելով, ընդհ. Հայ սկսուածի մը կ'օժտուի հայերէն սկսուածական ընտիր ու կատարեալ դասագիրքով մը:

Ա. Բանակ.— Ա. Բանակը կանո- նաւորարար ամէն շաբաթ կը կատարէ իր շիջըրներու ժողովը: Վերջին ժո- ղովին մէջ վերջնականապէս կ'ազմուե- ցան խմբակները որոնք ամէն յոյս կը ներշնչեն արագ յառաջգրիթութեան մը:

Անցեալ կիրակի, 9 ապրիլ Ա. Բա- նակը կատարեց իր տաշին արշաւը դէպի Մեքսիկո-Բուլնար:

Գ. Բանակ.— Գ. Բանակը տակա- լին գործունէութեան ունէ շարժում ի յայտ չէ բերած, նոյնպէս և կեդր. Որբանոցի Տղա Բանակը: Պէտք է շար- ժիլ. եղանակին պահանջը այդ է:

— Անհուն հաճոյքը սենեկանք այ- ցելու թիւը ընդունելու մեր հա- մակրի ընկերոջ՝ Էտեմիշի 7րդ բա- նակին խմբակները՝ Պր. Արամ Յով-

հաննէսեանի, որ քանի մ'օրէ ի վեր տեղս կը գտնուի:

Պր. Արամ, ըլլալով սկսուածի մը շիջըր հաւատացեալ մը, 2 տարիէ ի վեր պարտաճանաչօրէն կը վարէ խմբա- պետի պաշտօնը իր սկսուածներուն մէջ ստեղծելով համակրելի շրջանակ մը:

Իր յայտարարութեանց համեմատ Էտեմիշի սկսուածները թէև նիւթա- կանով անձուկ վիճակ մը կը ներկա- յացնեն այսուամենայնիւ սկսուածական խմբավարութիւնը օրըստօրէ կ'ա- լելնայ անոնց մէջ:

— Տեղւոյ սկսուածական կեդրոնը Ս. Զատիկի առթիւ բազմաթիւ շնոր- հաւորութիւններ ստացած է եւրո- պայի և Ամերիկայի զանազան սկսու- տական կազմակերպութիւններու կողմէ:

ՀԱՅ ՍՎԱՌԻՏԻՉՄԸ

ԵՐԵՎԱՆԻ ՄԵՋ (Սեփ. Թղթակ.)

Սկսուածի մը եզրագծի ընդհանր գա- յութիւններուն կողմէ թէև ընդգրկուած՝ սակայն երկրին բնական ու աշխար- հաբարական դիրքը պատճառ կը հան- դիսանայ միւս երկրներու բազմա- մամբ շատ աւելի դանդաղ գործունէ ութեան մը:

Անցեալ շաբաթ տեղւոյս Անգլիացի սկսուածներու կողմէ կազմակերպուած հանդէս մը տեղի ունեցաւ որուն ներ- կայ գտնուիլ փութացած էր խոստե-

րամ բազմութիւն մը նիւթապէս ու բարոյապէս քաջալերելու համար ըս. կատարելու: Նոյնպէս տեղւոյս հայ սկսուածները Մայիս ամսոյ մէջ պիտի սարքեն սկսուածական մեծ հանդէս մը որուն հասոյթը պիտի յատկացուի Հա- յաստանի որբ սկսուածներուն: Սպա- յակոյտին որոշմամբ նոյն նպատակաւ երկու հանդէսներ տեղի պիտի ունե- նան ամէն տարի շարունակ: Կար:

Ս. ՍԻՐԱՔԵԱՆ

Ն. ՊԱՆՈՒՅ ՄԵՋ

Հ. Մ. Ը. Մ. Վարչութեան որոշ- մամբ մասնաճիւղերու սկսուածական գործունէութեան շուրջ իրական գա- յափար մը կ'ազմուէ և սկսուածներու հետ մօտէն շփուած մը հաստատուելու համար յիշալ Վարչութեան անդամ- ները խմբովին այցելեցին իւրաքան- չիւր մասնաճիւղերը և քննութենէ անցուցին անոնց սկսուածական խում- բերը:

Վարչութեան անդամներու մի քա- նիին, ի մասնաւորի Պր. Թ. Մեծա- տարեանի յայտարարութեանց համե- մատ մասնաճիւղերը թէև կարելին կ'ընեն իրենց խումբերը կատարեալ վիճակի մը հասցնելու համար ու ա- նոնց մէջ կայ աշխատելու կորով, բայց առհասարակ սկսուածական ճշարիտ ոգին տակաւին կատարելապէս մուտք գործած չէ անոնց մէջ ու մարմնա- մազը միշտ կը տիրապետէ արդիւն- ըլլալով սկսուածի մը յառաջգրիթու- թեան:

ԹԶԹԻԿԻՑ



Սկսուածի Պատմութիւնը:

ՈՒՐՈՒՍՎԱՆՆԵՐՈՒ ԴՂԵԱԿԸ

ԴԷՊԻ ԱՆՄԱՆՈՅԸ

Միսրի եւ Կրանսիոյ. երկու ար- կածախնդիր սկսուածներ, նոր երկրներ տեսնելու յոյսով տոգորուած՝ կը ֆա- լին դէպի անձամբօր, պայտուակը՝ ի- ռենց բեւիւն վրայ եւ ֆաշուրիներ՝ սր- օին մէջ: Արհամարհելով լեռներն ու ձորերը, անդադար կը յառաջանային, ի-րենց ուղեգրքին մէջ միշտ արձանա- գրելով հանգիպած կարեւոր իրենք ու դէպքերը:

— Յոգնեցա՞ր. Միսրի, հարցուց Կրանսիոյ իր ընկերոջ. խորհէ թէ տա- կաւին 800 մետր ճամբայ ունինք ֆալ- լիք գիւղ հասնելու համար. ուր կա- ռող ենք հացագործէն յագեցնել մեր

ֆաղձը: — Այո, պիտի...

Եւ լուռ ու մուկ սկսան մագցիլ այն սեպ ձեւ զաւրիվեր որ վիշիւն արգելին եր իրենց օրական ուղեգրքին: Վերջապէս զապօր բարձրացան:

— Ո՛հ, ինչ հրաշալի բնութիւն...

Բացառական Միսրի: Ի՞նչ ամբողջ ձորն ու եղի ինքնեղով ծածկուած ե կու բլրակները կը տա- րածուէին իրենց ակնարկներուն առ- ջիւ: Ինքնաբերական արեւը կ'եր- ար բալուխ կանանց ծառերով պատ- ւած աւերակ դղեակի մը ետեւ:

Այս դղեակին համար կարելի է խորհիլ թէ աւանդական օրգաններու միջոցին ծառայած է իբր աւանդակա- յան մը կամ բերդ մը. Իսկ այժմ ժայ- ռոս միջնորմի մը եզերք կանգնած՝ բանաստեղծական տեսարան մը կը պար- գէ:

— Այո, իսկապէս սքանչելի է... մեքերաւ Կրանսիոյ, բայց եթէ քիչ մ'ալ չ'անապարհեմք հացագործը իր փեղիքը գոցած պիտի ըլլայ...

Ու երկու սկսուածներ կանանց ժայ- ռերու մէջէն իջան նրբուղի ի վար, մինչ գիւղը կ'աւանդուէ անոնց պատ- ւած՝ լուռ եր... ուր միայն ֆանի մը ոսկեգոյն պատուաններ եւ գետակի մը արձաբառող երկր կարելի է տեսնել:

Քիւրիսի աւանդական զանգակառու- նը ժամի եօթը կը հնչէ երբ յանկած Կրանսիոյ գոչեց:

— Ահա հացագործը...

Ու մինչ իր պէտք վերջին հացը կը օգէր, Միսրի. տակաւին մը կ'ընկած՝ կը վերջիւնէ այն դժուարին ճամբաները զորս հեղձած էին ամբողջ օրը:

Որոշեցին անմիջապէս դղեակին բլրակը մագցիլով ճիւղ ֆոփի անառը գիւղերէլ առաւօտեան մուտէն պարս- պարուելու համար:

— Ի՞նչ է այս դղեակին անունը, հարցուց Միսրի:

— Ուղեգրքիս մէջ նշանակուած է: Հաշտապաշտ. այս պէտք է ըլլայ. բայց հացագործը սարսափեցուց զիս, պատկերով թէ աւերակներուն մէջ ուր- ունակներ կան...

Հարիւր տարի առաջ հոն բնակող ռեւագործ ազնուական մը... սպան- ուած է... եւ որ միշտ կ'ուզայ ամ- բասանել գիւղերային այցելուները...

— Թո՛ղ ֆու հացագործը արգելէ չ'ըլլայ մեզ մեղքիդ, գոչեց Միսրի, ու մինչ երկու անվախ սկսուածները կը յառաջանային դէպի պարիկներու դրդ- եակը, հացագործը իր խանութին սե- մին վրայ կանգնած՝ կը դի-եր անոնց հեռանալը ու զարմացեալ տեսով մը կը մտնար...

— Կարելի՞ է միթէ... այս տարիքին մէջ...

(Քարգմ. Ֆրանսէիէն) =Շարունակ=



ՄԱՐԶԱՇԻԱՐԸ

Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ



ՖՈՒԹԳՈՒԼ ՄԵՐ ՄԷՋ

Մասնաճիւղերու Գործունէութեան

Գարաքաշ. — Անցեալ կիրակի, 2 Ապրիլ, առաւօտ Գարաքաշի «Բելօքս»ի դաշտին վրայ տեղի պիտի ունենար Հայկական գաւաթի մրցումներէն մին՝ Գարաքաշի Վարդանեան և Իվմիրի Բ. Մասնաճիւղին խումբերուն միջև բայց այս վերջինիս բացակայութեան պատճառաւ Վարդանեան խումբը յաղթական յայտարարուելով 2 նիշ շահեցաւ:

Իզմիր. — Նոյն կիրակի առաւօտ, ժամը 9ին, «Բանիօն-իօս»ի դաշտին վրայ Հայկական գաւաթին համար մըրցեցան Գորտէլիօի և Ուրմանցի խումբերը, որոնք 1ի դէմ 1 կօշով հաւասար հանդիսացան:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Ցաւով կ'իմանանք թէ Հայ Ակումբի Մարմն. Ճիւղի ատենապետը և բազմապատակ սրբօրթէն՝ Պր. Մ. Եանըգեան իր պարզ հրաժարականը մատուցած է յիշեալ վարչութեան, կարգ մը անհատական պատճառներու բերքաւ:

Պր. Եանըգեան 20 տարիէ ի վեր գրեթէ զեկամարը եղած է Իզմիրի Հայ մարմնակրթանքին և այս տեսակէտով ցարդ իր ունեցած գործունէութեան օգտակար արդիւնքը պատճառ մըն է որով Հ. Ա. Մ. Ճ.ի վարչութիւնը պարտաւորուի ամէն ջանք չխնայել այդ հրաժարականը ետ վերադարձնելով կրկին օգտաշատ գործունէութեան մը հրաւիրել Պր. Եանըգեանը, որ յուսով ենք թէ այս անգամ ամէն կողմէ եղած խնդրանքներուն տեղի պիտի տայ վերջապէս:

ՖՈՒԹԳՈՒԼ ԱԶԳԵՐՈՒԻ ՄԻՋՆԻ

Բարիդ. — (30 Մարտ). Անցեալ կիրակի օր, 26 Մարտ, խաղացուած Ֆութպօլի միջազգային մրցումներուն արդիւնքը կուտանք ստորեւ.

Ֆրանսա յաղթեց Պելճիգային 1ի դէմ 2 կօշով:

Հոլանտա յաղթեց Ֆրանսայի Օի դէմ 5 կօշով:

Գերմանիա հաւասար հանդիսացաւ Չեխոսլովակիոյ 2ի դէմ 2 կօշով:

ԱՂՋԻԿ ՍՆԱՌԻՏՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐԶԱՌՈՒՅԻՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ

ՄԵԾ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ

Իգական սեռի միջազգային ողիմպիական խաղերը երկրորդ անգամ տեղի պիտի ունենան Մոնթե-Գարօի մէջ, այս տարի 16-26 Ապրիլին: Իգական ակումբները ամենամեծ մրցումները տեղի պիտի ունենան որոնց պիտի մասնակցին Անգլիացի, Ֆրանսացի, Իտալացի, Շուէտացի և այլն մարզկուհիներ:

Անցեալ տարի Անգլիացիները Հանցան առաջնութիւնը, որով ամէն ճիշդ կը թափեն ու միշտ փորձեր կը կատարեն Բատինկտօնի մէջ, իրենց արտօնութիւնը այս տարի ալ պահելու համար: Միւս կողմէ Ֆրանսացի մարզկուհիներն ալ կը ջանան մարզուիլ, իրենց վրէժը լուծելու համար:

Աղջիկ-Սկաուտներն ալ կը շարժին

Վարչախիս (սեփ.) — Տեղւոյս Բոլնիացի աղջիկ-սկաուտներու խումբը պատրաստութիւններ կը տեսնէ Մայիսի սկիզբները Պելճիգայ այցելելով 15օրեայ բանակում մը կատարելու համար: Սոյն բանակումին հրաւիրուած են նաև Անգլիացի աղջիկ-սկաուտները որոնք հազիւ թէ Մայիս 10ին ներկայ պիտի ըլլան Պրիւսէի եթէ վերին կազմակերպութիւնը թոյլատրէ:

ԹՂԹԱԿԻՑ

Աղջիկ-Սկաուտներու Նամակատի փ

Ֆինլանտացի աղջիկ-սկաուտներու (girl-guides) Խմբապետուհի Օր. Մարթա Սիլվո կը կը փախաքի Թվիսկիլ հայ աղջիկ-սկաուտներու եւ մարզ լուծիներու հետ, զիւր հետեւեալ հասցէին.

M. Silvo, papilla
à Hemola (Finlande)

ԽԱՂԵՐԸ

Հաւկիթներով վազը.

Մէկ կարգի վրայ շարուած սկաուտները, մէկ ձեռքով բռնած են կըրակ վառելու համար բաւականաչափ փայտ և թուղթ, միւս ձեռքով՝ աման մը, իսկ բերանին մէջ՝ հաւկիթով դգալ մը:

Տրուած ազգանշանին՝ պատրաստ են շտապաւ յառաջանալ դէպի 60 մէթր հեռաւորութեան մը վրայ առաջուց նշանակուած վայր մը ուր կրակ վառելով, իրենց ամանին մէջ հաւկիթը պիտի եփեն իր ծայրագոյն աստիճանին ու անմիջապէս վազելով պիտի յանձնեն զայն մեկնումի ճէտին վրայ գտնուող գատաւորին:

Այս խաղը կամ մրցումը զուարթ միջադէպերով լի՝ օգտակար փորձմըն է զոր կարելի է նոյնպէս կատարել հանդիսականներու առջև:

«Գերիան»
Խմբակի մը սկաուտը իր ձեռքերն ու ոտքերը կապուած՝ գերի բռնուած է: Միւս խմբակը այս գերին պահպանելու համար 100 մէթր հեռաւորութեան մը վրայ շրջապատած է զինք. Առաջին խմբակը իր գերի ըսկաուտը ազատելու համար պարտաւոր է ճիշդիլ անցնել պաշտպանողականի գիծը առանց թշնամիէն տեսնուելու ու քակել գերին կապերը: Եթէ յաջողի շրջանակէն դուրս հանել զինք, իր խմբակը յաղթական կը յայտարարուի:

Խմբային վազի մրցում (cross-country) Բարիդ (Սեփ.) — Անցեալ կիրակի, 12 Մարտ, տեղի ունեցաւ Շեֆլքընի մրցանակին իգական սեռի բաժնին խումբային վազքի մրցումը որուն առաջին հանդիսանալով մրցանակը Հանցան Օր. Սիլվան Բօրդ, Մաւսկիլիսիակումբէն: Օր. Սիլվան Բօրդ՝ Ֆրանսայի իգական սեռի լաւագոյն լուզորդն է և բաւական առիթներով ցոյց տուած է իր կարողութիւնը իբր առաջնակարգ մարզկուհի:

ԴԷՊՈՒԵՓԵՍՈՍ

Անցեալ Ուրբաթ, 7 Ապրիլ, տեղի ունեցաւ խմբային այց մը դէպի Եփեսոսի աւերակները՝ կազմակերպուած տեղւոյս Ամերիկեան վարժարաններու տնօրէնութեանց և Ե. Բ. Ը. և Ե. Կ. Բ. Ը. հանց կողմէ:

Երկու սեռէ բաղկացեալ 200 հոգիէ աւելի աշակերտներ ու անդամներ առաւօտեան յատուկ շոգեկառքով ուղղուեցան դէպի այդ աւանդական աւերակները, իրիկունը վերադառնալու պայմանաւ:

Այս առթիւ շնորհաւորելի են սոյն արշաւին կազմակերպիչները, քանցի ներկաները բացօդեայ կեանքի մը բոլոր հաճոյքները ըմբօջխնելով հանդերձ վայելիցին նաև հնադարեան աւերակներու գեղեցիկ ու հետաքրքրական տեսարանը:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

Յպ. Քէշիշեան — Իզմիր